# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N 162- Ա** **16 օգոստոսի 2017 թ.**

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետը

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ հատկացնել Հայաստանի Հանրապետության Երկրապահ կամավորականների միության կողմից ս.թ. օգոստոսի 15-ից սեպտեմբերի 2-ը կազմակերպված դեպի Արցախ ուխտագնացությանը ԵԿՄ Գեղարքունիքի տարածքային բաժանմունքի երկրապահների մասնակցությունը ապահովելու համար:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել ԵԿՄ Գեղարքունիքի մարզի խորհրդի նախագահ Բագրատ Հարությունյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ